№ 219 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8 — 1904 — ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8 № 219

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բազմակողմանի ուսումնասիրութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընկերական ոգով. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի լուրջը. Խաղաղութեան XIII համաշխարհային կոնգրէսը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի մոռացված սկզբունք։

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ներքին գործերի մինիստրի արտասանած ճառերը առիթ տուին ռուսաց ժամուլի օրգաններին խօսելու պետութեան ներքին խնդիրների մասին և մասնացոյց լինելու գործունէութեան այն ասպարէզների վրա, որտեղ մինչև այժմ նկատվում էին նախաձեռնութեան համար խոչընդոտներ։

Մենք առ այժմ կանգ չենք առնի զանազան թերթերի յայտնած ծրագիրների վրա։ Ներկայումս հարցը ծրագիրների մէջ չէ, այլ այն բանի, թէ ո՞ր աստիճան նրանք գործնականապէս իրագործելի են կեանքի մէջ։ Տասնեակ տարիների ընթացքում պարզվել են ժողովրդական բազմաթիւ կարիքներ, որոնք պահանջում են բաւարարութիւն այս ու այն չափով։ Այդ բաւարարութիւնը կարող են տալ կամ պետութիւնը, կամ ինքնավարական մարմինները, կամ երկուսը միասին։ Մինիստրի արտասանած խօսքերի մէջ ամենաորոշ և պարզ կերպով շեշտված էր այն հանգամանքը, որ նա վստահութիւն է տածում դէպի գեմստվօի և քաղաքային ինքնավարութեան օրգանները և այդպիսով հրաւիրում է նրանց տեղական գործունէութեան։ Այդ հանգամանքը մի յայտնի չափով կենդանութիւն է մտցրել այն առաջին ժողովների մէջ, որ գումարել են Ռուսաստանի զանազան տեղերում գեմստվօները և քաղաքային վարչութիւնները։ Այդ ժողովները, ոգևորված վստահութեան այն քուէով, որ տուել է նրանց մինիստրը, պատրաստակամութիւն են յայտնում գործելու իրանց վերապահված ասպարէզներում, յուսալով, որ նրանց գործունէութիւնը կը տայ արդիւնաւէտ հետևանքներ։

Կարիքների ուսումնասիրութիւնը և նրանց բաւարարութիւն տալը, անկասկած, պահանջում են երկու պայման, մի կողմից աշխատանք, որպէս զի ուսումնասիրութիւնը լինի կարելին չափ լուրջ և խորին, իսկ միւս կողմից, որ այդ ուսումնասիրութեան համար գրաւված լինեն այն բոլոր տարրերը, որոնք կարող են օգտաւէտ և հեղինակաւոր ցուցումներ տալ քննվող հարցերի մասին։ Որքան լիակատար կը լինի այդ ուսումնասիրութիւնը, այնքան աւելի նա համոզեցուցիչ կը լինի այն հիմնարկութիւնների համար, որոնք կոչված են միջոցներ հայթայթելու պարզված կարիքներին բաւարարութիւն տալու համար։

Ահա այդ բազմակողմանի, լուրջ ուսումնասիրութեան խնդիրն է, որ հանդէս է գալիս հասարակութեան առաջ, երբ նա սկսում է առանձին հոգատարութեամբ զբաղվել իր կարիքների հարցերով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՈԳՈՎ

Հոկտեմբերի 5-ին Բագումի բացվեց հայոց ներկայացումների սեզոնը։ Ո՞վ էր բացողը։ Ո՛չ Բագուի կրեսոնների կապիտալը. ոչ հասարակական գիտակցութեան արդիւնք հանդիսացող մի որ և է կազմակերպութիւն։ Լիբրագրական յայտարարութիւնները պարզապէս ասում են, որ բացողը հայ դրամատիկ դերասանական ընկերութիւնն է, ղեկավարութեամբ տ. Սիրանոյշի։

Առաջին անգամը չէ, որ այդ ընկերութիւնը հանդէս է գալիս մեզանում իբրև սեզոն բացող։ Մի երկու անգամ դէպք է եղել, որ երբ հասարակութիւնը մոռանում է իր մայրենի բեմը, երբ նրա մէջ ղեկավարների, հասկացողների, գործիչների անուն վայելողները անընդունակ են հանդիսանում գործը ապահովել դրամական նպաստներով, մեր դերասանները, առանց աջ ու ձախ նայելու, համախմբվում են, ընկերութիւն են կազմում և իրանց ուսերի վրա են վերցնում հայոց թատրոնի գաղափարի ամբողջ ծանրութիւնը...

Այսօր կրկնվում է այդ երևոյթը։ Եւ նայելով մեր հասարակութեան, նայելով մեր կուլտուրական և քաղաքակրթական պատրաստականութեան, մարգարէ չը պէտք է լինել՝ գուշակելու համար, որ այսուհետև էլ դեռ շատ պիտի կրկնվի այդ երևոյթը։

Մի քանի տարի առաջ ես նոյն այս էջերից ողջունել եմ հայ դերասանների այդ ընկերակցական քաջագործութիւնը։

Ի՞նչպէս չողջունել և այժմ։ Թատրոնի գործը մեզանից շատ ու շատ զարգացած, պատրաստականութիւն ունեցող, հոգով հարուստ ազգերի մէջ էլ առանց պետական կամ հասարակական աջակցութեան առաջ չէ գնում։ Ահագին գումարներ է նա կլանում և դա կորուստ չէ մի երկրի, մի ժողովրդի համար։ Բևեռից բևեռ յայտնի է ամեն մէկին, որ թատրոնն էլ նոյն դպրոցն է, որի մէջ կրթվում են, պատրաստվում են քաղաքացիներ։ Եւ որովհետև միայն դժբաղդ, կենդանութեան ոչ մի յոյս չը տուող ազգերն են, որոնք դրպրոցների վրա ծախսած գումարները կորած են համարում,—ուստի առաջադիմութեան, գիտակցութեան աշխարհում թատրոնի կլանած գումարները համարվում են հասարակական կրթութեան յատկացրած նպաստ, օժանդակութիւն։

Մեզանում այս հանրածանօթ իրողութիւնը չը հասկացվեց։ Մեզանում թատրոնական գործի դիմաց կանգնած է կամ անհոգի բիւրոկրատական մեծամտութիւնը կամ հասարակական ինքնագործութեան կատարեալ բացակայութիւնը։ Մեզանում հայ դերասանը, ինչպէս մի ժամանակ բազմաչարչար հայ ուսուցիչը, հասնելով սեզոնի վերջին, կանգնում է այն ծանր, տանջող, հոգեժաշ հարցի առաջ, թէ ինչ կը լինի յետոյ. արդեօք կունենայ նա մի տեղ, թէ պէտք է թափառել, մուրալ, քաղցի ու ծարաւի դէմ կուել ամեն միջոցներով։ Հաստատուն, յարատև դրութիւն չը կայ. թատրոնի այսօրվայ մեկենասը վաղը կարող է ձեռքը թափ տալ և արտասանել զզուելի «բան չունիս»-ը. այսօրվայ դրամատիկական, գեղարուեստական կամ մի այլ անուն ունեցող ընկերութիւնը վաղը կարող է իր չաղ-չաղ կապրիզները առաջ գցել և բեմի բազմամեայ, նոյն իսկ տաղանդաւոր գործիչը կարող է դուրս շպրտված լինել «առանց պատճառների բացատրութեան»։

Պատահականութիւններ... Քիչ են նրանք մեր անկերպարան կեանքում։ Մի ամբողջ դառն մարտիրոսագրութիւն կը ստացվի, եթէ մենք փորձենք նոյն իսկ թուել պատահականութիւնների սպանած հասարակական գործերը։

Մենք սովոր ենք այդ սպանողներին, մենք երբէք չենք էլ մտածել, թէ կարող ենք ազատվել դրանցից։ Եւ յանկարծ տեսնում ենք մեր այդ վաղեմի թշնամու դէմ հանած մի ամբողջ կազմակերպութիւն, մի ամբողջ պայքար, որի անունն է ընկերական ոգի։

Մի օտար մարդ, կարդալով աֆիշայի վրա, թէ այս ինչ օրը դերասանական ընկերութիւնը բաց պիտի անէ թատրոնական սեզոնը, առանց բաժանումներով։ Մի քանի տարում նա այնպիսի մի հսկայական ոյժ և ազդեցութիւն ձեռք բերեց, որի նմանը թերևս միայն Ֆրանկմասոններն ունէին Ֆրանսիայում, կամ Կարբոնարներն Իտալիայում։ Նրան անդամակցում էին երրորդ հանրապետութեան լաւագոյն ուժերը։

Հայրենիքի ստորացման, նրա մխացող վէրքերի առաջ այդ լիգայի հիմնադիրները չէին կարող անգամ մտածել, որ իրանց ընտրած նշանաբանը հակամարդկային է, դէմ է լայն մարդասիրական ոգուն, դէմ է առաջադէմ, մաքուր ազգայնութեան գաղափարին։ Նրանք չէին երևակայում անգամ, որ «գրքի» կողքին իրանց նշանաբանում մտցնելով «սուրը», մեզանչում են ֆրանսիական մարդասէր ոգու դէմ։

Բայց նրանք այդ մտածել չէին կարող. ստորացած հայրենիքը թոյլ չէր տալիս առողջ լոգիկային գործելու։ Լիգան ծնունդ էր հիւանդ ժամանակի, նրա նշանաբանի մէջը մտաւ մի հիւանդ, միլիտարիստ ոգի։ Նա դարձաւ ոչ իմաստութեան ու գիտութեան տարածող, այլ սրի։ Նրա «գիրքն» էլ սովորական գիրքը չէր, որ ազնուացնում, քնքշացնում է մարդուն՝ ներշնչելով բարու և գեղեցիկի իդէալը... Ո՞չ. նրա գիրքը զէնքի նախադուռն էր. զինուոր պատրաստող, հայրենիքի համար կրակ ու ջուր մտնող, արիւն հոսեցնող հերոսներ ստեղծող գիրք էր նա։ Կարճ—նրա գիրքն էլ միլիտարիստ էր, զէնքն էլ։ Բարոյում, բարձրացնում, իդէալ էր հրատարակում լիգան զինուորի կըտրիճութիւնը, արևան գետերը, հայրենիքի ուռուցիկ, արտաքին փառքը։ Նա շոյում էր մարդ-գազանին, մոռացութեան մատնելով մարդկային համերաշխութեան սկզբունքը։

Հայրենիքի հիւանդ պայմանները, արիւնաքամ վէրքերն ստեղծեցին մի ընկերութիւն, որի սկզբունքը հրաշալի կը լինէր, եթէ մի քիչ մաքրէին նրան, եթէ նրա նշանաբանից դուրս շպրտէին պողպատէ սուրը։

Բայց հայրենիքի վէրքն սպեղանի էր ուզում։ Եւ այդ սպեղանին Ժան Մասէի նման լայն, ազգային ու համամարդկային իդէաներով տոգորված մարդն անգամ որոնեց պողպատէ սրի փայլի մէջ։ Հանգամանքներն այդ էին պահանջում տիրաբար։

Չէ՞ որ մարդը և սկզբունքները ծնունդ են միջավայրի։

Լիգան տոգորվեց վրէժի զգացմունքով։ Եւ այն ամենը՝ ինչ որ ֆրանսիական էր, սուրբ էր, մաքուր, ազնիւ, գերազանց... նոյն իսկ ֆրանսիական մոլութիւնը թուում էր լուսաւոր... իսկ ինչ գերմանական էր—նա խաւար էր, մռայլ, կեղտոտ՝ դժոխք...

Բայց անցան ցաւագար օրերը։ Մեծ ազգն արագութեամբ կազդուրվեց։ Կեանքն ընկաւ իր սովորական ուղին։ Արիւնծոր վէրքերի կսկիծը անցաւ։

Սպիանում էր վէրքը, ցաւը մոռացվում։ Ֆրանսիական ազգի հիւանդոտ պայմանները վերանում էին։ Լիգան հսկայական ծառայութիւն է արել արդէն։ Բանակը բարձրացել, ամբողջ աշխարհում առաջնակարգ դիրք է բռնել։ Ֆրանսիական զինուորը գրագէտ է, օֆիցէրը գիտութիւնով զինված։ Նրա արտիլէրիան, նրա նաւատորմը գիտութեան վերջին խօսքի արդիւնքն են։

Ֆրանսիան կրկին գրաւել է իրան վայել տեղը պետութիւնների շարքում։ Նապոլէոն III-ի բէժիմի ստորացումը չքացել է։ Այժմ Ֆրանսիան կարող է առողջ լոգիկայով մտածել։ Միլիտարիզմի ծնեցրած «թթու ազգասիրութիւնը» կամ շովինիզմը, որ Ֆրանսիայում «նացիոնալիզմ» անունն է կրում բոլորովին ապօրինի կերպով, սկսում է չքանալ և նրա տեղը բռնում է մի այլ տեսակի ազգայնութիւն, մի ուրիշ նացիոնալիզմ։

Լիգան էլ իր նշանաբանից հանում է «սուրը» և թողնում է միայն «գիրքը»։

Ֆրանսիան վերադառնում է իր հին գաղափարին։ Մոռացված սկզբունքը վերակենդանանում է։

Խաժակ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՄՈՌԱՑՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔ

I

1871 թիւն էր։

Դեռ ամեն մի ֆրանսիացու ականջ դժժում էր պրուսական թնդանօթների որոտից։ Դեռ գերման բարբարոսութեան ակներև փաստերը կանգուն էին։ «Jardin Botanique»-ի կտրատված ծառերը, թնդանօթի ռումբերից տապալված շէնքերը... սիացող Պարիզը դեռ կենդանի վկաներ էին նորագոյն դարի այդ վանդալականութեանը։

Դեռ նոր էր Ֆրանսիան կորցրել երկու մեծ գաւառներ (Էլզասը և Լոտարինգիան) և մի «փոքր մարդու» (Նապոլէոն III-ին)։

Նապոլէոն III-ի Ֆրանսիան յաղթված, փշրված էր։

Ո՞ւմից—Վիլհելմից, Բիսմարկից, Մոլտկէից։

Ո՛չ, պրուսական վարժապետից, տարրական դպրոցների համեստ, խեղճ ուսուցչից։

Այդ հսկայական կռիւը լոկ թնդանօթների պատերազմ չէր։ Իրար հետ կռուում էին երկու սկզբունքներ—Նապոլէոն III-ի և Վիլհելմ I-ի։ Մէկը խարիբայութիւն, կեղծիք էր, մամուլի ճնշման, կաշառքի, ֆաւորիտիզմի, ինապարծութեան բէժիմն էր. նրա հիմքը տգիտութիւնն ու խաւարն էին։ Իսկ երկրորդ սիստէմը «Երիտասարդ Գերմանիայի» սկզբունքների վրա էր հիմնված։ Դա մամուլի ազատութիւն, ճշտապահութիւն, շատ գործել՝ քիչ խօսել էր պահանջում։ Դրա հիմքը դրված էր ընդհանուր և պարտադիր տարրական կրթութեան ու գիտութեան վրա։

Եւ կրթութիւնը, գիտութիւնը յաղթեց։

Վա՛յ յաղթվածին։ Հինգ միլիարդ տուգանք դրին Ֆրանսիայի վզին, և մինչև այդ տուգանքը տալ վերջացնելը՝ պրուսական զօրքը պէտք է նստէր յաղթված Պարիզում, Ֆրանսիայի սրտի վրա։

Բայց Ֆրանսիան կայծակի արագութեամբ դաւաւ վերածնութեան ուղին։

2-3 ամսում հսկայական տուգանքը վճարվից։ Հինգ վագոն լիքը ձոյլ ոսկի Պարիզից ուղևորվեց Բերլին, հետը տանելով Բիսմարկի դաւակ բերդապահներին Պարիզից։

Ահա այդ խառն և յուսահատական վայրկեաններում մի յայտնի քաղաքական գործիչ և բաւական հեղինակաւոր մանկավարժական գրող՝ Ժան Մասէ՝ բարձրացրեց իր ձայնը։

Նա քարոզեց, պարզեց, որ Պրուսիան յաղթից իր վարժապետի շնորհով. այժմ Ֆրանսիան ճիգ պէտք է թափէ իր վարժապետին առաջ քշել. փոխանակ Նապոլէոն III-ի փչացած վարչութեան։ Պէտք է ուսուցիչներին միաւորել, մի մարմին կազմել, նոր ոգի, թարմ ուղղութիւն ներշնչել և ապա նրանց հսկայական ցանցովը ծածկել մայր-հայրենիքը, նրանց միաձև ուղղութեամբ կրակուտ ոգի ներշնչել Ֆրանսիայի նոր սերնդին. պէտք է պատրաստվել վրէժի, փոխարինութեան համար։

Նրա ոգևորված յօդուածները ցնցեցին Ֆրանսիայի երիտասարդ դաստիարակներին։ Ժան Մասէն կազմեց իր հռչակաւոր «Կրթական ընկերութիւնը» («Ligue de l'Enseignement»)։ Լիգայի նշանաբանը եղաւ «Հայրենիքի համար՝ գրով եւ սրով» (Pour la Patrie, par le livre, par l'épée)։

Հայրենիքը յաղթված էր։ Ֆրանսիայի վէրքը դեռ մխում, կսկծում էր։ Ամբողջ երկիրը մի հոգի—մի մարմին եղած՝ մտածում էր վրէժի, փոխարինութեան մասին։

Կրթական Լիգան առաջարկում էր այդ նպատակին հասնելու ուղին։ Գիրք և սուր... կրթութիւն և զինուոր։

Բոլոր երիտասարդութիւնն՝ էլէքտրականացած այդ հմայիչ մտքով, օրօրված փոխարինութեան ապագայ երազներով, անդամ էր գրվում Մասէի հիմնած դաշնակցութեանը։ Կարճ միջոցում ամբողջ Ֆրանսիան ծածկվեց այդ լիգայի կոմիտէներովը, նրա ստոլաներով։ Մի քանի տարում նա այնպիսի մի հսկայական ոյժ և ազդեցութիւն ձեռք բերեց, որի նմանը թերևս միայն Ֆրանկմասոններն ունէին Ֆրանսիայում, կամ Կարբոնարներն Իտալիայում։ Նրան անդամակցում էին երրորդ հանրապետութեան լաւագոյն ուժերը։

Հայրենիքի ստորացման, նրա մխացող վէրքերի առաջ այդ լիգայի հիմնադիրները չէին կարող անգամ մտածել, որ իրանց ընտրած նշանաբանը հակամարդկային է, դէմ է լայն մարդասիրական ոգուն, դէմ է առաջադէմ, մաքուր ազգայնութեան գաղափարին։ Նրանք չէին երևակայում անգամ, որ «գրքի» կողքին իրանց նշանաբանում մտցնելով «սուրը», մեզանչում են ֆրանսիական մարդասէր ոգու դէմ։

Բայց նրանք այդ մտածել չէին կարող. ստորացած հայրենիքը թոյլ չէր տալիս առողջ լոգիկային գործելու։ Լիգան ծնունդ էր հիւանդ ժամանակի, նրա նշանաբանի մէջը մտաւ մի հիւանդ, միլիտարիստ ոգի։ Նա դարձաւ ոչ իմաստութեան ու գիտութեան տարածող, այլ սրի։ Նրա «գիրքն» էլ սովորական գիրքը չէր, որ ազնուացնում, քնքշացնում է մարդուն՝ ներշնչելով բարու և գեղեցիկի իդէալը... Ո՞չ. նրա գիրքը զէնքի նախադուռն էր. զինուոր պատրաստող, հայրենիքի համար կրակ ու ջուր մտնող, արիւն հոսեցնող հերոսներ ստեղծող գիրք էր նա։ Կարճ—նրա գիրքն էլ միլիտարիստ էր, զէնքն էլ։ Բարոյում, բարձրացնում, իդէալ էր հրատարակում լիգան զինուորի կըտրիճութիւնը, արևան գետերը, հայրենիքի ուռուցիկ, արտաքին փառքը։ Նա շոյում էր մարդ-գազանին, մոռացութեան մատնելով մարդկային համերաշխութեան սկզբունքը։

Հայրենիքի հիւանդ պայմանները, արիւնաքամ վէրքերն ստեղծեցին մի ընկերութիւն, որի սկզբունքը հրաշալի կը լինէր, եթէ մի քիչ մաքրէին նրան, եթէ նրա նշանաբանից դուրս շպրտէին պողպատէ սուրը։

Բայց հայրենիքի վէրքն սպեղանի էր ուզում։ Եւ այդ սպեղանին Ժան Մասէի նման լայն, ազգային ու համամարդկային իդէաներով տոգորված մարդն անգամ որոնեց պողպատէ սրի փայլի մէջ։ Հանգամանքներն այդ էին պահանջում տիրաբար։

Չէ՞ որ մարդը և սկզբունքները ծնունդ են միջավայրի։

Լիգան տոգորվեց վրէժի զգացմունքով։ Եւ այն ամենը՝ ինչ որ ֆրանսիական էր, սուրբ էր, մաքուր, ազնիւ, գերազանց... նոյն իսկ ֆրանսիական մոլութիւնը թուում էր լուսաւոր... իսկ ինչ գերմանական էր—նա խաւար էր, մռայլ, կեղտոտ՝ դժոխք...

Բայց անցան ցաւագար օրերը։ Մեծ ազգն արագութեամբ կազդուրվեց։ Կեանքն ընկաւ իր սովորական ուղին։ Արիւնծոր վէրքերի կսկիծը անցաւ։

Սպիանում էր վէրքը, ցաւը մոռացվում։ Ֆրանսիական ազգի հիւանդոտ պայմանները վերանում էին։ Լիգան հսկայական ծառայութիւն է արել արդէն։ Բանակը բարձրացել, ամբողջ աշխարհում առաջնակարգ դիրք է բռնել։ Ֆրանսիական զինուորը գրագէտ է, օֆիցէրը գիտութիւնով զինված։ Նրա արտիլէրիան, նրա նաւատորմը գիտութեան վերջին խօսքի արդիւնքն են։

Ֆրանսիան կրկին գրաւել է իրան վայել տեղը պետութիւնների շարքում։ Նապոլէոն III-ի բէժիմի ստորացումը չքացել է։ Այժմ Ֆրանսիան կարող է առողջ լոգիկայով մտածել։ Միլիտարիզմի ծնեցրած «թթու ազգասիրութիւնը» կամ շովինիզմը, որ Ֆրանսիայում «նացիոնալիզմ» անունն է կրում բոլորովին ապօրինի կերպով, սկսում է չքանալ և նրա տեղը բռնում է մի այլ տեսակի ազգայնութիւն, մի ուրիշ նացիոնալիզմ։

Լիգան էլ իր նշանաբանից հանում է «սուրը» և թողնում է միայն «գիրքը»։

Ֆրանսիան վերադառնում է իր հին գաղափարին։ Մոռացված սկզբունքը վերակենդանանում է։

Խաժակ

ռանձին անբնական բան չի տեսնի այդ խօսքերի մէջ և կանցնէ, կը շարունակէ իր ճանապարհը։ Բայց մենք, հայերս, այդպէս կարո՞ղ ենք վերաբերվել այդ յայտարարութեան։

Ովքե՞ր են հայ թատրոնի համար այդպիսի համարձակ, նոյն իսկ յանդուգն քայլ անողները։ Զարմանալի, անբնական, անհասկանալի երևոյթ կը լինէր, եթէ հայ դերասանները հայկական իրականութեան հարազատ զաւակները չը լինէին։ Շատ և շատ զարմանալի կը լինէր, եթէ այդ աշխատաւորները փոքր ի շատէ կանէին։ Այդ դէպքում նրանք հայութեան գործին ծառայողներ չը պիտի լինէին, «այլ ծնունդ մի այլ ազգի»։ Հայութեան գաղափարի բոլոր ասպարէզներում մի և նոյնն է.—Ադամենը քաղցած, Դամառ Քաթիպան քաղցած։

Մեր դերասանների ստացած ռոճիկները, յայտնի է, թէ ինչ սակարկութիւնների առարկայ են դառնում, ինչքան հրապարակական դատապարտութեան են ենթարկվում, ինչպէս չափազանց մեծ, ինչպէս հպարտութիւն, յանդգնութիւն արտայայտող։ Այս էլ զարմանալի չէ։ Մեր հին աշուղները հասարակական ասպարէզում գործողներին անուանել են «խալխի նօքար»։ Երբ հարցը գալիս է դրանց գոյութեան, «նօքարական» կեցութիւնից, «նօքարական» վախկոտութիւնից մի քիչ բարձրանալը մեղք ու կրակ է համարվում ոչ միայն ամբոխի աչքում, այլ և ինտելիգենցիայի, որ իր սեփական աշխատանքը միայն գիտէ գնահատել չափազանց լաւ, մէկին հինգով... Եւ այն, ինչ այժմ ասում են դերասանների ռոճիկների վերաբերմամբ, իրողութիւն է եղել և է բոլոր միւս հայ գործիչների վերաբերմամբ էլ։ Լոգիկան այստեղ անխախտ է։ «Նօքարը» «նօքար» էլ պիտի լինի։ Հայ վարժապետը լաւ ռոճի՞կ ստանայ։ Հայ գրողը լաւ ռոճի՞կ ստանայ։ Ծիծաղելի է այդպիսի հարց դնելն անգամ։

Աղմուկը, հարահրոցը, որ բարձրացաւ մեր դերասանների ռոճիկի առիթով, պարզապէս այն էր ցոյց տալիս, որ խօսքը «խալխի նօքարների» մասին է, որոնք քաղցած չը մնալու չափ միայն կարող են վարձատրութիւն ստանալ։

Եւ ահա այսպիսի վերաբերմունքով վարձատրված մարդիկ ընկերութիւն են կազմում, սէզօն են բաց անում։ Դրամագլուխ չեն նըրանք մէջտեղ բերում, կողմնակի օժանդակութիւն չեն ստանում, իսկ գործը բիսկ շատ ունի։ Ինչի՞ վրա են յոյս դնում նրանք։ Իրանց ոյժերի, իրանց շնորհի՞ վրա։ Տալիս են հասարակութեան ինչ ունեն, երկիւղ չը կրելով, որ կարող են ՁՆասվել, կարող են քաղցած մնալ։ Միութիւնը ոյժ է, մանաւանդ երբ այդ միութիւնը ընկերական սկզբունքներով է կենդանի։ Այն, ինչ մէկի, երկուսի համար անկարելի է, կատարում է հաւաքական ոյժը։ Իւրաքանչիւրը հաւասար չափերով եռանդ է մտցնում, զոհաբերութիւն է մտցնում, իսկ ամենը միասին հասարակական գործի ծանրութիւնն են վերցնում իրանց ուսերի վրա։

Կը դիմանա՞ն։ Ահա հարցը։ Եւ դրա վճռողը պիտի լինի ինքը, հասարակութիւնը։

Ես համոզված եմ, որ վճռելը դժուար չէ։ Ամենագլխաւորն է հասկանալ, թէ ովքեր են այդ ծանրութիւն կրողները և ինչ են մտցնում իրանց մէջ։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Սեպտեմբերի 29-ին

Ժողովրդական դպրոցների ուսուցիչների ժողովը ամսիս 25-ին վերջացրեց իր պարապմունքները, որոնք տեւեցին մօտ երեք շաբաթ։ Ժողովում արծարծած հարցերից ուշագրաւ պէտք է համարել պատիժների ու այլացեղ ու այլակրօն աշակերտների մէջ հաւասարաշխութիւն սերմանելու, զարգացնելու ու պահպանելու հարցը։ Նախքան պատիժների տեսակները ու չափը որոշելը, ժողովը պարզեց աշակերտական կեանքում կրկնվող այն դէպքերի պատճառները, որոնք ստիպում են ուսուցիչներին իրանց սաներին դաստիարակելու համար դիմել նաև պատժի օգնութեան։ Աշակերտական չարութիւնները ու ուրիշ դատապարտելի վարմունքները դասաւանդման ժամանակ չը պէտք է տեղի ունենան ընաւ, իսկ եթէ տեղի են ունենում, դրա գլխաւոր, համարեա միակ պատասխանատուութիւնը ընկնում է իրանց ուսուցիչների վրա, որոնք չեն կարողանում կամ չեն աշխատում իրանց դասերն ու դասաւանդութիւնը այնքան հետաքրքիր դարձնել, որ աշակերտներից ամենաչարերն անգամ ստիպված լինեն լարված ուշադրութեամբ լսել նրանց ու ենթարկվել նրա բարոյական հեղինակութեան։ Ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ եթէ դասատուութեան ժամանակ պատահում են պատժի արժանի դէպքեր, ուսուցիչը պէտք է նրանց ծագման պատճառները փնտռէ իր դասատուութեան թերութիւնների, իր պակասութիւնների մէջ։ Նախ պէտք է իրան իր խղճի առաջ բարոյական պատասխանատուութեան ենթարկէ ու յետոյ մտածէ չարութեան մէջ նկատված աշակերտին պատժելու մասին... Ուսուցիչը պէտք է աշխատէ այնպէս տանել իր գործը, որ եթէ ոչ բոլորովին, գոնէ շատ քիչ առիթներ ունենայ պատժելու իր աշակերտներին։ Նա պէտք է անախորժ դէպքերի առաջն առնէ իր մանկավարժական աչալրջութեամբ։

Այն հարցին՝ թէ ի՞նչից են առաջ գալիս գլխաւորապէս այդ չարութիւնները, որոնք ստիպում են պատիժների օգնութեան դիմել, ժողովականներից մի քանիսը պատասխանեցին՝ աշակերտները դասամիջոցներին ու ևս առաւել դասերից յետոյ փողոցներում յաճախ կուռւում են իրար հետ, և այդ ծագում է այն բանից, որ մեր ժողովրդական խաւերում, որտեղից են ժողովրդական դպրոցների բոլոր աշակերտները, հաւաբեա սաստիկ զարգացած է վայրախօսութիւնը (сквернословіе), հայհոյելը ու լպիրշ բառերի գործածութիւնը։ մեր գիւղացին, բանւորը, մեր ամբոխի մարդը միշտ հայհոյում է, նոյն իսկ իր տրամադրութեան ամենաքաղցր բօպենելում։ Նրա բառարանում հայհոյանքները պատկառելի տեղ են բռնում. հայհոյանքները խօսակցութեան աղն են համարվում. մեր ամբոխի անբարեկրթութեան անկուլտուրականութեան փառաւոր արտայայտութիւններից մինը վայրախօսութիւնը, հայհոյանքներն են։ Փոքրերը մեծերից սովորում են հայհոյելը աւելի շուտ քան «մայր» ու «հայր» բառերն արտասանելը։ Ժողովը, համարելով հայհոյանքները ու վայրախօսութիւնը, ընտանեկան անփոյթ, անբաւարար կրթութեան արդիւնք, յաճախ շատ կոպիտ ու վայրագ, որոշեց պարտաւորացնել ուսուցիչներին յաճախակի շփվել իրանց սաների ծնողների հետ, խօսել նրանց հետ դաստիարակութեան մասին ու այդպիսով տարածել, ժողովրդականացնել ամբոխի խաւերում մանկավարժական տարրական կանոնները, սկզբունքները, ձգտել այդպիսով դէպի բարեկրթութիւն տանել մեր ամբոխը։

Ի պատասխան նոյն հարցին, չարութիւնների պատճառներին վերաբերվող, ժողովականներից մի քանիսը ասացին, որ աշակերտական չարութիւնները այն դպրոցներում, որտեղ միասին սովորում են տարբեր կրօնների ու ազգութիւնների պատկանող աշակերտներ, ծագում են նաև կրօնական ու ազգայնական պատճառներից. աշակերտները ծաղրում են իրար կրօն, իրար լեզու ու ազգութիւն, ծագում է նրանց մէջ անհաշտ թշնամութիւն. յաճախակի տեղի են ունենում կռիւներ, և այդ կատարվում է այնպիսի դպրոցներում, որտեղ ուսուցիչները, շնորհիւ իրանց միակողմանի զարգացման, սահմանափակ աշխարհահայեցքի, իրանց բացարձակ համակրութիւնը կամ հակակրութիւնն են ցոյց տալիս այս կամ այն կրօնին, լեզուին կամ ազգութեան, իրանք իրանց անտակտ, անիմաստ վերաբերութեամբ այդպիսի նուրբ հարցերին, ներշնչում են իրանց սաներին կամ թքու սեր կամ կոյր ատելութիւն դէպի այս կամ այն կրօնը, լեզուն ու ազգութիւնը։ Այդպիսի դպրոցը չարիքների աղբիւր է ժողովրդի համար, այլ ոչ բարիքների։

Ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ ուսուցչի այդպիսի ուղղութիւնը անպայման դատապարտելի է. զանազան կրօնների ու ազգութիւնների պատկանող աշակերտների հետ պարապող ուսուցիչները պէտք է միշտ բարձր կանգնած լինեն նեղ կրօնական ու ազգայնական հակումներից, պէտք է լինեն լայն, լուսամիտ հայեացքների տէր անձինք, որոնց համար չը կայ ոչ հելլէն, ոչ հրէայ, ու պէտք է նրանք ներշնչեն իրանց սաներին փոխադարձաբար յարգել իրար կրօնը, լեզուն ու ազգութիւնը, պէտք է հասկացնեն նրանց, որ իւրաքանչիւր մարդու համար անչափ թանգ են նրա կրօնն ու ազգութիւնը. պահանջելով ուրիշներից յարգանք դէպի մեր սրբութիւնները, պէտք է նոյն չափ յարգանք ցոյց տանք մենք նրանց սրբութիւններին... Ուսուցիչները, զբաղելով իրանց համակրութիւններն ու հակակրութիւնները, պէտք է ամեն քայլափոխում ցոյց տան իրանց սաներին, որ իրանք, ուսուցիչները, անխտիր յարգում են բոլորի կրօնը, լեզուն ու ազգութիւնը։ Այդպիսի ուսուցիչների աշակերտները կը տոգորվեն անշուշտ նրանց ուղղութեամբ, ոգով, նրանց աշխարհահայեացքով։ Նոյն բանի մասին էլ պէտք է ուսուցիչները խօսեն ծնողների հետ, նրանց մէջ էլ պէտք է տարածեն լուսամիտ հայեացքներ ու կուռւեն այդպիսով կրօնական ու այլ տեսակ մոլեռանդութեան դէմ։

Ֆիզիքական պատիժների մասին ժողովում խօսք անգամ չեղաւ, քանի որ նրանք անպայման դատապարտված ու ընդ միշտ վերացված են համարվում։ Պատիժները պէտք է լինեն գլխաւորապէս բարոյական. աշակերտը պէտք է պատժվի բարոյապէս, այլ ոչ ֆիզիքապէս. մի քանի ժամ շարունակ քաղցած, առանց ճաշ թողնել, երկար կանգնեցնել կամ չոքեցնելը նոյնպէս ֆիզիքական պատիժներ են. մարմինը ամենափոքր տանջանքի անգամ չը պէտք է ենթարկվի։ Իր յանդիմանութիւններով ու նկատողութիւններով ուսուցիչը պէտք է աշխատէ ազդել աշակերտի համոզմունքի վրա, հասկացնել նրան՝ ինչն է լաւ, ինչն է վատ, ինչն է թոյլատրելի, ինչն է անթոյլատրելի։ Աշակերտին ագատութիւնից զրկելը չը պէտք է մի կամ երկու ժամից աւելի լինի, այդ պատիժը պէտք է մեծ զգուշութեամբ ու տակտով գործադրել ու դիմել նրան ծայրայեղ դէպքում, բայց քաղցած չը պահել աշակերտին, թոյլ տալ նրան մի բան ուտել, նոյն իսկ գնալ տուն, ճաշել ու յետոյ գալ դպրոց սահմանած պատիժը կրելու համար։

Վերջում ժողովը, աչքի առաջ ունենալով, որ Գանձակի նահանգի ժողովրդական ուսուցիչները ուսուցչութիւն են անում մեծ մասամբ խառն ազգաբնակութեան մէջ, գլխաւորապէս հայերից ու թուրքերից կազմված, բուռն ցանկութիւն յայտնեց, որ ուսուցիչները ամեն կերպ աշխատեն հաւասարաշխութեան սերմեր, բարի հարևանութեան, փոխադարձ բարեացակամութեան զգացմունքներ սփռել, աճեցնել ու տարածել երկու դարաւոր հարևանների մէջ. թէ դպրոցում և թէ դպրոցից դուրս, ժողովրդի խաւերում, իրանց գործունէութեան գլխաւոր նպատակներից մինը պէտք է այդ համարեն ու այդպիսով ձգտեն վերացնել խսպառ այն անմիտ, կորստաբեր թշնամութիւնը, որը երբեմնակի արտայայտվում է այս կամ այն տեղ ու անթիւ վնասներ հասցնում երկու կողմերին էլ։

Պէտք է յուսալ, որ մեր նահանգի գիւղական ուսուցիչները կաշխատեն իրանց արդիւնաւէտ հասարակաօգուտ գործունէութեամբ ապացուցանել, որ տեղի ունեցած համագումար ժողովը անօգուտ չէ անցել նրանց համար։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թաւրիզի ռուսաց գլխաւոր հիւպատոսը հեռագրել է Կովկասի կառավարչապետին, որ սեպտեմբերի 25 ից մինչև հոկտեմբերի 3 ի երեկոն Թաւրիզում խօլերայից մեռել են 3,500 մարդ։ Հոկտեմբերի 3-ին մեռածների թիւը 500 հոգուց աւելի է։

—

Երևանում կայանալիք բամբակաբուծական ժողովի նախագահ նշանակված է երկրագործական գէպարտամէնտի փոխ-տեսուչ իշխան Մասալսկին։

—

Բագում խօլերան զգալի կերպով նուազած լինելով, քաղաքի սանիտարական գործադիր յանձնաժողովում հարց է յարուցված հոկտեմբերի 15-ից բոլոր գործավարութիւնը յանձնել քաղաքային ուղրավայի յանձնաժողովին և ոչնչացնել այդ յանձնաժողովի յատուկ բիւրօն, որովհետև նրա աշխատանքները չափազանց նուազել են։

—

«Кавк.» պաշտօնական լրագրի ասելով՝ ներկայումս աւարտված է արդէն Նելախից Նուխի եւ Նելախից Շուշի կառուցվելիք երկաթուղու գծի տեխնիական և տնտեսական հետազօտութիւնը։ Հաւաքված վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ շատ մեծ քանակութեամբ ապրանք կը լինի այդ գծով փոխադրութեան համար. այդ պատճառով էլ յոյս կայ, որ շատ շուտով կարող է այդ գծի շինութիւնն իրականանալ։ Գիծն ունենալու է լոկ առևտրական նշանակութիւն։ Տեխնիական տեսակէտից՝ նրա կառուցումը ոչ մի առանձին դժուարութիւն չէ ներկայացնում։

—

Հոկտեմբերի 6-ին կայացաւ Ռուսական աշխարհագրական ընկերութեան Կովկասեան բաժնի հերթական ընդհանուր ժողովը ինֆանտէրիայի գեներալ Ա. Ա. Ֆրէզէի նախագահութեամբ։ Կապիտան Սմիրնովը կարդաց իր ուղևորութեան մասին «Հիւսիսային Քիւրդիստանում», այսինքն ռուսական սահմանից մինչև Բիթլիս քաղաքը։ Թէ ինչու դասախօսը յամառաբար այդ երկիրը «Քիւրդիստան» է անուանել՝ այդ թողնենք։ Դասախօսութեան հետաքրքիր կողմերից մէկը այն է, որ քիւրդերը անտարբեր էին դէպի կրօնը, բայց կառավարութիւնը վերջին 15 տարիները մզկիթներ հիմնեց և մոլլաներ ուղարկեց նրանց մօտ, որոնք քարոզում են կրօնի սկզբունքները։ Գուցէ և ուրիշ բաներ, որ անծանօթ է պ. դասախօսին։ Հետաքրքիր է և այն, որ դասախօսը նկատել է, որ քիւրդերի և թիւրքերի յարաբերութիւնը լարված է, որովհետև թուրքը միշտ արհամարհում է քիւրդին իբր ստոր ցեղի։

—

Ստացանք Հ. Առաքելեանի Հանրամատչելի Գրադարանի VII գրքոյկը, որ կազմում է «բնութեան նկարագրութիւններ» սէրիայի առաջին համարը։ Այս հատորի մէջ ամփոփված է Ա. Մխիթարեանի «Դէպի Արարատ ուղևորութիւն» գրուածքը։ Գիրքը տպված է էէրմէս տպարանում՝ շատ մաքուր և գեղեցիկ. բաղկացած է 159 փոքրադիր երեսից և արժէ 40 կ.։

—

Ժողովրդական լուսաւորութեան դէպարտամէնտը տեղեկացրել է դպրոցական շրջանների հոգաբարձուներին, որ ինժեներ-տեխնօլոգները և ինժեներ-մեխանիկները իրաւունք չունեն ռէալական դպրոցներում մաթեմատիկայի ուսուցիչ լինել, առանց կանխապէս այդ առարկայից քննութիւն տալու որոշված կարգով։

—

Ստացանք հետեւեալ նոր գրքերը. 1) Զօն Ստիւարտ Բլէկի «Մտաւոր, ֆիզիքական և բարոյական ինքնակրթութիւնը», թարգմանութիւն Գրիգոր Շահրուդաղեանի, II տպագրութիւն Թիֆլիս 1904 թ., գինն է 60 կ. 2) Տօպէլիուսի Ուրախ Մանկի պատմութիւնը, մանկական զրոյց թարգմանեց Գրիգոր Շահրուդաղեան, Թիֆլիս, 1904 թ. գինն է 15 կ.։

—

Քուբայիսի նահանգի ազնուականների արտակարգ ժողովը որոշել է իր անունով եղած Բարձրագոյն նուէրը՝ 20,000 ր. յատկացնել սովորողներին ստիպենդիաներ կամ թոշակներ տալու համար։

—

Բաթումի քաղաքային հիւանդանոցի կանոնադրութիւնը հաստատվել է ներքին գործերի մինիստրութիւնից։ Ամեն մի հիւանդ օրական վճարելու է առնուազը 60 կոպէկ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Եապօնաստանը Անգլիայում։ Լօնդօնից հեռագրում են հոկտեմբերի 1-ին «Новое Время» լրագրին. «Ենթադրում են, որ ներկայ պատերազմի փորձը բոլորովին կը փոխէ տակտիկայի մէթօդները և կը ստիպէ բոլոր պետութիւններին արմատականապէս վերակազմել զինուորական կազմակերպութիւնը։ Եապօնիայի վերջին կոչը անգլիական բարեկամներին իր ֆինանսների սպառման առիթով՝ դրդում է եապօնասէրներին յուսահատ ջանքեր անել համոզելու համար հասարակական կարծիքը, թէ Անգլիան պարտաւոր է դաշնակցութեան զօրութեամբ միջոցներ հայթայթել Եապոնիային՝ պատերազմը վարելու համար։ Եռանդի մէջ ամենքին գերազանցում է այդ կողմից Ալֆրէդ Ստէդը, որդի յայտնի ռուսասէր և հրապարակախօս Ստէդի, որը վճռական դիմադրութիւն է ցոյց տալիս որդուն իր «Review of Reviews» հանդէսի մէջ։»

Ո՞ւն էր Կուրոպատկինի պլանը։ «Рус. Вѣд.» լրագրի քննադատը, խօսելով Ճանապարհի մօտ կատարված պատերազմական գործողութիւնների անաջող ելքի մասին, ասում է, թէ գեներալ Կուրոպատկինի պլանն էր անցնել Կուրօկիի բանակի եռակը և յետ մղել նրան դէպի արևմուտք, իսկ յետոյ սեղմել ամբողջ եապօնական բանակը դէպի Խունխէ գետը։ Սակայն այդ պլանը չաջողվեց երկու գլխաւոր պատճառով։ Մի կողմից Կուրօկիի բանակը ցոյց տուեց ռուսներին աւելի ուժեղ դիմադրութիւն, քան ենթադրվում էր. սեպտեմբերի 29-ին ռուսաց արևելեան զօրախումբը (կամ, աւելի ճիշդն ասած, ռուսաց բանակը—որով-

հետև այդտեղ էին գեներալ Կուրոպատկինի գլխաւոր ոյժերը) գրաւեց միայն մի քանի կէտեր Եանտայի գագաթի վրա, բայց լեռնանցքերը գտնվում էին դեռ եապոնացիների ձեռքում։ Երկրորդ, Կուրոկիի բանակը ստացաւ նշանաւոր աջակցութիւն, և սեպտեմբերի 30-ին եապոնացիները յարձակվեցին այն բարձրութիւնների վրա, որ ռուսները հզիւ գրաւել էին և որոնք տիրապետում էին Կուրոկիի կենտրոնական դիրքի վրա, հաւանօրէն, Տուտիպլինի լեռնանցքում։ Եթէ հաւատանք Օյամայի զեկուցման, եապոնացիներին աջողվեց վերցնել այդ դիրքը և մենք նահանջեցինք։ Սեպտեմբերի 30-ին հրաման տրվեց, որ մեր ձախ թեը նահանջէ Շախէ գետի միւս կողմը, հիւսիս և այդպիսով ռուսաց բանակը նահանջեց ամբողջ ճակատի վրա։ Ձախ թեի նահանջումը առաջ եկաւ անաջողութիւնից աջ թեի վրա և կենտրոնում, ուր դեռ 29-ին ռուսները ստիպված էին յետ դնալ 15 վերստ տեղ, Շախէ գետից դէպի հիւսիս գտնվող դիրքերի վրա։

Պors-Արsուրը ինչպես է usանում օգնութիւն։ «Echo de Paris» լրագրին թղթակիցը հաղորդում է, որ շատ նաւերի աջողվում է անցնել պաշարման գծից, և որովհետև գեներալ Ստեսսելը առատաձեռնութեամբ վճարում է նրանց յանդուգն փորձերը, ուստի զարմանալի չէ, որ մի քանի անգլիական ֆիրմաներ գրաւվելով հարստանալու յոյսով, ուղարկում են Պորտ-Արթուր ռազմամթերքներով բեռնաւորված նաւեր։ Գեներալ Ստեսսելը ստացաւ սեպտեմբերի 26-ին տեղեկութիւն մանջուրական բանակի ընդհանուր արշաւման մասին մի ջոնկայի միջոցով, որ Չիֆուի ռուսաց հիւպատոսը վարձել էր։ Այն մասին, թէ ինչպես է ռազմամթերը ստանում Պորտ-Արթուրը, «Figaro» լրագիրը ստացել է տեղեկութիւն, որ ամերիկական մի քանի մեծ գործարաններ, որոնց տրված էին հարկաւոր հրահանգներ և որոնք պատրաստում էին ռուժերը և ուղարկում Չինաստան. այնտեղից ջոնկաները և փոքր նաւերը տանում էին պաշարված բերդը։

Գեներալ Կուրոպատկինի նահանջումը, բնականաբար, սաստիկ քննադատութիւն է առաջ բերել ռուսներին թշնամի շրջաններում։ «Zeit» լրագիրը հաղորդում է, թէ եապոնական մի բարձրաստիճան պաշտօնեայ յայտնել է, թէ եապոնացիները ուրիշ ոչ մի բան չէին ցանկանում, քան ռուսների արշաւումը։ Եապոնիայի վերջնական նպատակն է դուրս հանել ռուսներին Մանջուրիայից։ Եապոնիայում յոյս ունեն, որ այդ հարցերը վերջնականապէս կը լուծվեն Մուկդէնի մօտ։ Ռուսներին նահանջման դադարումը եապոնական ծրագիրներին ընդառաջ է գնում։ Եթէ եապոնացիները ստիպված լինէին հալածել ռուսներին մինչև Խարբին, նրանց գործը շատ կը դժուարանար, որովհետև նա չափազանց հեռու է եապոնական օպէրացիոնական յենակէտից, մի բան, որ դժուարացնում է զօրքին ուտեստ և ռազմամթերք հայթայթելը։ Այժմ, երբ գործողութիւնների վերջնական կէտը կը լինի Մուկդէնը, այդ գործը չափազանց հեշտանում է։ Երբ կը սառչէ Նիու Զուանի նաւահանգիստը, գործողութիւնների յենակէտը կը փոխադրվի Դալնի քաղաքը, որտեղից երկաթուղի է գնում։ Բացի դրանից Պորտ-Արթուրի գրաւումը պէտք է վճռված գործ համարել, որովհետև գեներալ Ստեսսելը իրը թէ յայտնել է, որ նա այժմ կուռնենայ պաշտպանել բերդը մինչև նոյեմբերի կէսը։ (Н. Вр.)

Կարծիք գեներալ կուրոպատկինի մասին։ «Русское Слово» լրագրին հեռագրում են Բերլինից. «Յայտնի գեներալ-լեյտենանտ Ֆոն դերԲէկ մի ընդարձակ յօդուածով ջերմ կերպով պաշտպանում է Կուրոպատկինին, որը, նրա համոզմունքով, ամենևին մեղաւոր չէ անաջողութեան մէջ։ Հաւատալով Կուրոպատկինի բախտաւոր աստղին և նրա անզուգական ռազմագիտական տաղանդին, որ նա փառաւոր կերպով ցոյց տուեց Լեաօեանի մօտ, Բէկը համոզված է, թէ ռուսները կը յաղթեն, եթէ միայն Կուրոպատկինին ընդհանուր հրամանատար կարգեն և նրան ամբ գործողութեան ազատութիւն։ (Р. С.)

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ XIII ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԷՍԸ

—

Այս հոկտեմբերի 2-ին (ն. տ.) Ամերիկայի Բոստոն քաղաքում կայացաւ խաղաղութեան XIII համաշխարհային կոնգրէսը, որի մասին յայտնի միլիարդատէր Անդրէ Կարնէջիի նախագահութեամբ կազմված կարգադրիչ մի յանձնաժողով ահագին և արտակարգ պատրաստութիւններ է տեսել։ Ամերիկայից յատկապէս մի մեծ ովկիանոսական շոգենաւ է ուղարկվել Համբուրգ Եւրոպայից գնացող անդամներին տանելու համար։ Շոգենաւային զանազան ընկերութիւններ ևս յանձն էին առել զանազան տեղերից տանել անդամներին նշանաւոր զեղջով։ Կիրակի, հոկտեմբերի 2-ին Բոստոնի բոլոր եկեղեցիներում կատարվեցին մաղթանքներ և արտասանվեցին քարոզներ, իսկ երեկոյեան Սիմֆոնի Հալլում տեղի ունեցաւ մի կոնցերտ, բաղկացած 400 ձայներից։ Բազմաթիւ զուարճական արշաւանքներ են կազմակերպված, ինչպես և բանկէտներ։ Միացեալ Նահանգների արտաքին գործերի մինիստր Հայը, հոկտեմբերի 3-ին մի երկար ճառ արտասանեց, իրրև կառավարութեան ներկայացուցիչ։ Առհասարակ, ամերիկացիները ամեն ջանք գործ են դրել, որ ներկայ կոնգրէսը լինի ամենաբազմամարդը և փայլունը մինչև այժմ եղած բոլոր կոնգրէսներից։ Կոնգրէսին ներկայացել են և երկու հայ եպիսկոպոսներ։ Կոդրէսը պարապեց և հայկական հարցով։ Կոնգրէսին մասնակցելու հրաւէր ստացել էր և պ. Հ. Առաքելեան, որը, սակայն, չը կարողացաւ գնալ, տեղի հեռաւորութեան պատճառով։ Եւրոպայի գրեթէ բոլոր խաղաղասէրները ներկայ են եղել։ Եղել են մի քանի ներկայացուցիչներ և Ռուսաստանից։

Յաջորդ XIV կոնգրէսը գումարվելու է Հռոմում եկող տարի։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անգլիա։ Հոկտեմբերի վերջերին Սուտհամպտոնում կայանալու է Միացեալ Թագաւորութեան պահպանողական կազմակերպութիւնների ընդհանուր ժողովը։ Այդ ժողովում առաջարկվելու է մի բանաձև կամ որոշում, որով Չէմբերլէնի պրոտէկցիոնիստ ծրագրին հաւանութիւն է տրվում։ Քաղաքական շրջանները մեծ հետաքրքրութեամբ են սպասում այդ ժողովին, որովհետև դրանից է կախված այժմեան մինիստրութեան բաղդը։ Ինչպէս յայտնի է, Բալֆուրը յայտարարել է, որ ինքը կը հրաժարվի պահպանողականներին զեկավար լինելուց, եթէ նրանք մտցնեն իրանց ծրագրի մէջ պրոտէկցիոնիզմը։ Ուրեմն կարելի է սպասել, որ եթէ սպասվելիք ընդհանուր ժողովն ընդունէ պրոտէկցիոնիստական բէզոլիւցիան, Բալֆուրը ստիպված կը լինի հրաժարական տալ։ Իսկ եթէ նա իր խոստումը կատարէ և մնայ իր պաշտօնում, այն ժամանակ կուսակցութեան էական պարագուլիսը կը լինի Չէմբերլէնը, իսկ Բալֆուրը կը մնայ շէֆ լոկ անունով։

Ֆրանսիա։ Վերջին օրերս գաղթավայրերի մինիստր Դամէրգն իր ընտրողների առաջ մի ճառ ասաց եկեղեցին պետութիւնից բաժանելու օրվայ խնդրի մասին։ «Մենք կանգնած ենք այդ մեծ բարեփոխութեան նախօրէին, ասաց մինիստրը իր ճառի վերջում։ Վաղը կոնկորդատի լուծումը և եկեղեցու բաժանումը պետութիւնից կը լինի արդէն կատարված փաստ։ Թող յայտնի լինի, որ կառավարութիւնն ամբողջապէս անձնատուր կը լինի այդ կուրն. նա չի խանգարի գործը և չի տատանվի... Սխալ է, որ մենք ուրիշ ոչ մի նպատակ, ոչ մի իդէալ չունենք, բացի եկեղեցու դէմ պարտնչելուց։ Մենք դէմ ենք եկեղեցուն, որովհետև նա դէմ է առաջադիմութեան, որովհետև նրա հզօրութիւնը, նրա ոգին մշտական խոչընդոտներ են հանդիսանում սոցիալական մեծ բարենորոգումների դէմ։

—Ինչպէս հաղորդել էինք, չորս օֆիցէրներ բռնված են զինուորական մինիստրութեան 25,000 ֆրանկը փչացնելու մէջ։ Նրանք այդ գումարը գործ են դրել Դրէյֆուսի դէմ վկաներ կաշառելու համար։ Լրագիրները հաղորդում են, որ այդ չորսի՝ գնդապետ Բոլլէնի, և կապիտաններ Դոտրեշի, Ֆրանսուայի և Մարբէշալի դատը տեսնվելու է հոկտեմբերի 12-ի և 16-ի միջև և կը տևէ առնուազը 3 օր։

Գերմանիա։ Բերլինից «Standard» լրագրին հաղորդում են, որ գաղութների մինիստրութիւնը հարաւային աֆրիկական գերմանական գաղութներից շատ անհանգստացնող լուրեր է ստացել։ Այդ լուրերի մասին մենք արդէն հաղորդել էինք մի քանի տեղեկութիւններ։ Այժմ առաջ ենք բերում հետևեալ մանրամասնութիւնները։ Վիտբուա նահանգի ազգաբնակութիւնը թողել է քաղաքը և հեռացել՝ թշնամական նպատակներով։ Ֆիշ գետի վրա կունս կայարանը ենթարկվեց այդ ընկնների յարձակմանը։ Ասում են, որ Բաստարդներին էլ դրդում են ապստամբվել։ Առ այժմ չէ կարելի հաստատ ասել, թէ արդեօք Վիտբուա ցեղի մի մասը, թէ ամբողջութիւնն է ապստամբված։ Ինչ էլ որ լինի, դրութիւնը շատ երկիւղալի է դարձել այն օրից, երբ հոթէնթոթների զանազան ցեղեր էլ սկսեցին խլրտումներ ցոյց տալ։ Եթէ դրանք էլ ապըստամբութեան դրօշակ պարզեն, համահօթէնթոտական ապստամբութիւնն անխուսափելի կը լինի։ Այն ինչ գերմանական նահանգապետն իր ձեռքի տակ ունի միայն երկու վաշտ հետևակ և արտիլէրիական մի բատարէա Կսէտոնում և մի վաշտ հետևակ Վինդհօէկում։ —Գերմանական ժողովը պնդում է, որ անհրաժեշտ է 10,000 նոր զօրք ուղարկել հարաւային Աֆրիկա։—Ահա այդ է գերմանական կոլոնիալ քաղաքականութեան խստութեան, նրա բռնակալութեան արդիւնքը։

—«Р. Сл.» լրագրի յատուկ թղթակիցը հեռագրում է Բերլինից. «Բրոմբերգի երկաթուղային լէհ բանուորներին վերջերս արգելել էին խօսել լեհերէն, իսկ այժմ արգելեցին կարդալ լեհական լրագիրներ»։ Եւ այդ XX դարում, իր կուլտուրայով պարծեցող Պրուսիայում։ Այժմ պարզ է, թէ ինչու Պրուսիան այդքան բարեկամ է Թիւրքիային։

Թիւրքիա։ Լրագիրները հաղորդում են մի շատ ուրախալի և միաժամանակ անհաւատալի լուր։ Իբր թէ սուլթանը հրամայել է ամբողջ կայսրութեան ազգաբնակութիւնը «աշխարհագիր առնել» կամ ցուցակագրել։ Այդպիսի մի մեծ և ընդհանուր մարդկութեան տեսակէտից անհրաժեշտ, իսկ թիւրքական տեսակէտից անպիսի, գործի ձեռնարկելու պատճառը հասարում են հետևեալը։ Մակեդոնական զանազան ազգութիւններն իրար արիւն են խմում։ Յոյները պնդում են, որ իրանք երկրի մէջ մեծամասնութիւն են կազմում և պահանջում են, որ դրա համեմատ էլ բարենորոգութիւններ ներմուծվեն։ Եթէ աշխարհագիր անելու պատճառն այդ է, ուրեմն կարելի է հաստատ պնդել, որ եթէ կատարվի էլ, նա կը հինի միայն Մակեդոնիայի համար, այն էլ կեղծված ձևով, որպէս զի ճնշէ բոլգար տարրին և առաջ քաշէ յոյներին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 հոկտեմբերի

ՕՐԷՕԼ։ Գաւառական զէմստվոյի ժողովը ընդունեց վարչութեան նախագահի առաջարկութիւնը՝ դպրոցական մասնաժողովներ կազմելու մասին։ Որոշված է խնդրել նահանգական զէմստվոյի լրագիր հրատարակելու մասին։

ԿՈՒՉՆԵՑԿ։ Զէմստվոյի ժողովը վճռեց միջնորդել դպրոցական հոգաբարձութիւններ հիմնելու մասին։

ՕՐՇԱ։ Հոգաբարձուի և նահանգապետի ներկայութեամբ հանդիսաւորապէս օրհնվեց քաղաքի շինած իգական գիմնազիայի ընդարձակ շէնքը։

ՊԵՏՐՕԶԱՎՕԴՍԿ։ Զեմստվոյի ժողովը հաստատեց իր գաւառի ընդհանուր ուսուցման ծրագիրը և որոշեց ուսուցիչների ռոճիկն աստիճանաբար աւելացնել մինչև որոշված չափը։

ՐՕՍՏՕՎ ԴՈՆԻ ՎՐԱ։ Արևելեան անընդհատ քամու շնորհով Դոնի ջրի մակերևոյթը սաստիկ ցածրացաւ։ Նաւերը Բոստովից չեն կարողանում անցնել ծով։ Արտահանողները մեծ վնասներ են կրում։ Հարաւ-արևելեան ճանապարհների վրա հացի կուտակումը չը տեսնված չափի է հասել։

ԳԻԲՐԱԼՏԱՐ։ Մարօկկոյի ափերի մօտ իրար զարնվեցին անգլիական երկու ականանաւեր. նրանցից մէկը մեծ վնասներ է ստացել, իսկ միւսի քիթն է կոտրվել։ Երկու նաւն էլ Գիբրալտար եկան։

Կ. ՊՕԼԻՍ։ Տիեզերական պատրիարքի դրութիւնը սինոդում սաստիկ ծանրանում է, որովհետև կուսակալներին և բօսնիացիներին վերաբերվող հարցերի լուծման ժամանակ՝ սինոդի անդամների զիջումներ անել չը ցանկացած։ Յովակիմ III պատրիարքի հրաժարվելը համարվում է անյետաձգելի։

ԲՕՐԴՕ։ Այստեղի կայարանի մօտերը տեղի ունեցաւ ճեպընթաց գնացքի և ապրդատարի ընդհարումը։ Վիրաւորված են 12 ճամբորդ։

ՊԱՐԻԶ։ Կայացաւ կէլտօ-սլաւօնական լիգայի ընդհանուր ժողովի բացումը։ Կազմակերպող կոմիտէը նախաճաշ սարքեց։ Արտասանվեցին մի քանի ճառեր։ Մոսկվայի սլաւօնական ընկերութեան նախագահ Չերեպ-Սպիրիդոնովիչը այն միտքը յայտնեց, որ սկսված գործի հիմքը կազմում է ֆրանկո-ռուսական իրաւացի ազդեցութիւնը վերականգնելը Բալկանեան թերակղզու վրա և յարատևել եւրոպական խաղաղութիւնը։

7 հոկտեմբերի

ՏՕԿԻՕ, հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Եապոնական գլխաւոր բանակից ոչ այսօր, ոչ էլ երէկ ոչինչ զեկուցումներ չեն ստացված։ Այստեղ կարծում են, որ հոկտեմբերի լոյս 4-ի գիշերը ռուսների անաջող յարձակումներից յետոյ տեղի ունեցած լռութեան շրջանը առաջացրեց ռուսական զօրքերի կենտրոնացումը Նոդզուի և Օկուի բանակների դէմ։ Այժմ կարծում են, որ գեներալ Կուրոպատկին մտածում է միայն պաշտպանել իր աջ թեը և թիկնակողմը, ժամանակ վաստակելու և իր զօրքը Խունխէ գետի այն կողմը տանելու նպատակով։ Նոյնպէս և անհնարին են համարում թէ ռուսների յարձակում սկսելը և թէ դիրքերի պահելը՝ Շախէ գետի մօտ։

Սեպտեմբերի 27-ի ընթացքում եապոնական կորուստների վերաբերեալ տեղեկութիւնները դեռ ևս լրիւ չեն։ Նոյնպէս ճիշդ չեն տեղեկութիւնները ռուսների կորուստների մասին։ Նոյնպէս յայտնի չէ եապոնացիների խլած ռուսական թնդանօթների թիւը։

ԼՕՆԴՕՆ, 6 հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Օկուի բանակից հեռագրում են հոկտեմբերի 4-ից, որ եապոնացիները առաջ շարժվեցին 10 մղոն հեռաւորութեամբ Մուկդէնից դէպի հարաւ։ Խունխէ գետից երկու մղոն դէպի հարաւ ռուսները պաշտպանողական կառուցումներ են շինել։ Կարծում են, որ այնտեղ նրանք կը դիմադրեն եապոնացիների արշաւանքին։ Բնական ամրութիւններ չը կան այնտեղ։ Եապոնական աղբիւրից հաղորդում են, որ վերջին կռիւը մինչև այժմ դաշտավայրի վրա մղած բոլոր կռիւներից ամենակատաղին էր։ Ռուսական ոյժերը բաղկացած էին առաջին հետևակ և հինգերորդ ու վեցերորդ սիբիրեան կօրպուսներից։ Պաշտպանողական կառուցումները բաղկացած էին միայն շտապով փորված հրացանաձգային փոքր փոսերից։

ՄՈՒԿԴԷՆ, 6 հոկտեմբերի։ Առաւօտեան ժամանեց փոխարքան խորհրդակցելու համար գեներալ Կուրոպատկինի հետ։

ՖԱԿԵԷԼԲԷՐԳ, 6 հոկտեմբերի։ Առաւօտեան 7 ժամին բալտիական էսկադրայի երկու ռուսական նաւեր անցան հիւսիսային ուղղութեամբ։ Երկու ժամից յետոյ անցան էսկադրայի մնացած նաւերը։ Դանիական կրէյսէրը գնաց հիւսիսային ուղղութեամբ։

ԼՕՆԴՕՆ, 6 հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Օյաման հաղորդում է հոկտեմբերի 5-ից, որ ռուսները եապոնական աջ բանակի ուղղութեամբ պակասեցնում են ոյժերը. ներկայումս այնտեղ գործունէութիւն են ցոյց տալիս աննշան զօրամասեր։ Ռուսները յետ են նահանջում դէպի հիւսիս կենտրոնական բանակի ուղղութեամբ։ Հոկտեմբերի լոյս 4-ի գիշերը ռուսները մի քանի յարձակումներ գործեցին, որոնք յետ մղվեցին։ Այսօր երկու բանակները բաւականանում են արտիլէրիական հրաձգութեամբ։ Եապոնական ձախ բանակի ճակատի վրա ռուսները երբեմն կրակ են բացանում թնդանօթներից։

7 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-լեյտենանտ Սախարովի պաշտօնական հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թ. հոկտեմբերի 6-ից. «Հոկտեմբերի 6-ին թշնամու հետ պատերազմական ընդհարումներ չեղան։ Հոկտեմբերի 5-ին մեր հեծելախմբի խուզարկութիւն արած ժամանակը Սանդէպու-Խայ-Զէտայ դծի վրա՝ Տադիսանպու գիւղից 6 վերստ հեռու, եապոնական առաջապահները, կրակ անելով, շտապով յետ էին քաշվում մեր զօրախմբերի առջևից։ Գրաւված հետապնդութեամբ, հեծելախմբերը հանդիպեցին Սանդէպուի մէջ եապոնական հետևակներ խոշոր ուժերի՝ գնդաձիգները և արտիլէրիան հետը, որոնք կրակ բացին և ստիպեցին մեր հեծելախմբերին դադարեցնել հալածանքը։ Փոխ-եսաուլ Տուրգենևի խուզարկու խմբակը 200 քայլի վրա հանդիպեց գընդաձիգների կրակին։ Բոլոր կազակների ձիերը կոտորվեցին։ Ինքը փոխ-եսաուլ Տուրգենևը վիրաւորված վիճակում իր ձիու գաւակին առած դուրս փախցրեց կրակի բերանից մի վիրաւոր խուզարկուի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաժառանգ Ցեսարեվիչը համարվում է Ներին Մեծութեան 65-դ հետևակ գնդի ցուցակում։ Ներքին գործերի, զինուորական և ծովային մինիստրութիւնների համաձայնութեամբ, չը նայելով Հեռաւոր Արևելքի պատերազմական գործողութիւններին, թոյլատրված է ներկայ զօրակոչին III կարգի արտօնութիւն տալ ընտանեկան դրութեան համեմատ (կանոնադրութեան 48-դ յօդուածի III կէտը) այս տարվայ այն նորակոչներին, որոնք իրանց տարիքով անմիջապէս յաջորդում են պահեստի զօրքի կամ օպոլչենեցների մէջ գտնվող իրանց եղբայրներին։

ՏՕԿԻՕ, 4 հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Եապոնական բանակի գլխաւոր կենտրոնից ստացված զեկուցումի համաձայն՝ ռուսական ուժերը, կանգ առնելով եապոնական գծերից 600 կամ 1000 մէտր հեռաւորութեան վրա, ամրացնում են իրանց դիրքերը։

ԽԱՐԲԻՆ, 7 հոկտեմբերի։ Լուրերի համաձայն, եապոնացիները հոկտեմբերի լոյս 4-ի գիշերը նորից յարձակում գործեցին մեր առաջապահ մասերի բռնած դիրքերի վրա ու յետ մղվեցին։ Հոկտեմբերի 4-ի ընթացքում ռուս

Սոսի

Գրական, գեղարվեստական, հանրամատչելի, տարեգրքի (Գոնի վրա), քարտեզների, Տարեմուտի և Սուրբ Ծննդեան ... 8—80

Ս. Պետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում, Օդեսսայում, Տաշքենտում, Երևանում, Տաղանրոգում, Ռոստովում, Բաքվում, Ալեքսանդրապոլում, Գանձակում, Ղարսում, Թիֆլիսում, Սամարկանդում, Ֆերգանայում, Սոչիում, Ռիգայում, Ռոստովում, Ալեքսանդրապոլում, Գանձակում, Ղարսում, Թիֆլիսում, Սամարկանդում, Ֆերգանայում, Սոչիում

Գրական, գեղարվեստական, հանրամատչելի, տարեգրքի (Գոնի վրա), քարտեզների, Տարեմուտի և Սուրբ Ծննդեան ... 8—80

ԱՄԱՆՈՍ

ԳՈՎՓՎՍՅԱԳԱԴՅ ԴՈԿՈԴՈՅՈՆՍ

ՈՎՈՅԳՀ

Տեղ ունի Ամանոսի Գրական Ընկերության Գրադարանում (Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց)։ Գրադարանը բաց է ամեն օր՝ առավոտեան 9 ժամից մինչև երեկո 7 ժամը։ Գրադարանի հասցեն՝ Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց։

Գրադարանի հասցեն՝ Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց։

Գրադարանի հասցեն՝ Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց։

ԱՄԱՆՈՍ-ԱՄԵՐԻԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ Ս. Պետերբուրգում, որ հիմնված է 1860 թ.ին։

Առաջարկում է ուժեղ կրկնակօրեայ դեղ ամանակ ուշ գարձնել նրպանի պրօշմանների վրա, մանաւանդ ընկերութեան հիմնարկութեան թուականի վրա— „1860“, և „C.-ПЕТЕРБУРГЪ“ բառի վրա՝ կարմիր եռանկիւնու մէջը (գործարանի պրօշմանիշը)։

Մեծ քանակութեամբ վաճառում է

„ԷՕՊՕԼԴ ԿԻՅՇԷՒԼԻԻ“

Սանկտպետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում, Օդեսսայում, Տաղանրոգում, Ռոստովում, Բաքվում, Ալեքսանդրապոլում, Գանձակում, Ղարսում, Թիֆլիսում, Սամարկանդում, Ֆերգանայում, Սոչիում, Ռիգայում, Ռոստովում, Ալեքսանդրապոլում, Գանձակում, Ղարսում, Թիֆլիսում, Սամարկանդում, Ֆերգանայում, Սոչիում

ՄԱՆՈՍ-ԱՄԵՐԻԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ Ս. Պետերբուրգում, որ հիմնված է 1860 թ.ին։

Առաջարկում է ուժեղ կրկնակօրեայ դեղ ամանակ ուշ գարձնել նրպանի պրօշմանների վրա, մանաւանդ ընկերութեան հիմնարկութեան թուականի վրա— „1860“, և „C.-ПЕТЕРБУРГЪ“ բառի վրա՝ կարմիր եռանկիւնու մէջը (գործարանի պրօշմանիշը)։

Մեծ քանակութեամբ վաճառում է

„ԷՕՊՕԼԴ ԿԻՅՇԷՒԼԻԻ“

Սանկտպետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում, Օդեսսայում, Տաղանրոգում, Ռոստովում, Բաքվում, Ալեքսանդրապոլում, Գանձակում, Ղարսում, Թիֆլիսում, Սամարկանդում, Ֆերգանայում, Սոչիում, Ռիգայում, Ռոստովում, Ալեքսանդրապոլում, Գանձակում, Ղարսում, Թիֆլիսում, Սամարկանդում, Ֆերգանայում, Սոչիում

ՄԵԿՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԱՆ

1865. Մոսկվա 1870. Ս.-Պետեր. 1882. Մոսկվա 1896. Նիժնի-Նովգորոդ

եւ ոսկի մեդալներ գրաւուած ամենայն

ՄԻՄԻԱՅՆ

(GRAND-PRIX)

ՊԱՐԻԶԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

ամենամեծ Ոսկեայ մեդալով

ՄԻՄԻԱՅՆ

ՄԱՐԴԻՆԱՑՈՒՄՈՒԹԵՍՆ

Ամենամեծ հրամանագրեալ մանուֆակտուրա Ռուսաստանի համար

Դեղերու տարատեսակ ... 1—3

Տեղեկութիւն ստանալու համար գրեցէք՝ Նիժնի-Նովգորոդ, Գլաւնոյ փող. № 6։

Հասցէ՝ Գլաւնոյ փող. № 6։

ՅՈՒՆԱՍ

ԴՈՎՓՎՍՅԱԳԱԴՅ ԴՈԿՈԴՈՅՈՆՍ

ՈՎՈՅԳՀ

Տեղ ունի Յունասի Գրական Ընկերության Գրադարանում (Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց)։ Գրադարանը բաց է ամեն օր՝ առաւոտեան 9 ժամից մինչև երեկո 7 ժամը։ Գրադարանի հասցեն՝ Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց։

Գրադարանի հասցեն՝ Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց։

Գրադարանի հասցեն՝ Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց։

ՎԱՂՅԵՌԵՏ ՆԳԺԻ ՎԱ ՅՍՍԺՈՄ

Ամենամեծ դեղ է՝ ... սեր և մոլեռ։

Օտար Բուսաբերից գնել՝ Թիֆլիս, տպարան „Գերմես“. գրասենյակներ և գրավաճառներ։

Օտար Բուսաբերից գնել՝ Թիֆլիս, տպարան „Գերմես“. գրասենյակներ և գրավաճառներ։

Imprimerie "Hermes". Tiflis 10—10

Գրասենյակ Լոռեանի փող. № 33. Հ. Ղ. 5—10

Ֆ. Ա. ԶԵՄԼԻԽԻՆԸ

Ֆ Ա Ք Ա Ն Ց Ի Ն

Մատուցեալ մեքենաներ և սիֆիլիսական դեղերի գործարան։ Գրասենյակ՝ Գրիգորի փող. № 12 տան մոտ։ 1—3

Գրասենյակ՝ Գրիգորի փող. № 12 տան մոտ։ 1—3

Գրասենյակ՝ Գրիգորի փող. № 12 տան մոտ։ 1—3

ԳՈՎՓՎՍՅԱԳԱԴՅ ԴՈԿՈԴՈՅՈՆՍ

ՈՎՈՅԳՀ

Տեղ ունի Գովասյանի Գրական Ընկերության Գրադարանում (Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց)։ Գրադարանը բաց է ամեն օր՝ առաւոտեան 9 ժամից մինչև երեկո 7 ժամը։ Գրադարանի հասցեն՝ Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց։

Գրադարանի հասցեն՝ Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց։

Գրադարանի հասցեն՝ Գրիգորի փող. № 15, Գ. Ալիխանյանի տան դիմաց։